ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2019թ. դեկտեմբերի 26՝ N 136՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻ՝ 18.12.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 121 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2019թ. նոյեմբերի 19-ից ուժի մեջ մտած թիվ ԱՐԱԴ/2210/02/18 քաղաքացիական գործով կայացված վճիռը,

նշվի առնելով, որ Լ. Մկրտչյանի՝ 18.12.2019թ. թիվ 121 հրամանը հակասում է ԱՐԱԴ/2210/02/18 քաղաքացիական գործով կայացված վճռին, հետևաբար՝ այդ հրամանն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, ինչը սահմանված է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով,

ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետով, 2, 3 և 4-րդ մասերով, 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, 2-րդ և 5-րդ մասերով, 64-րդ հոդվածի 1-ին մասով, 65 և 67-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>>ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 10-րդ կետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բյուրական գյուղի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Մկրտչյանի՝ 18.12.2019թ. թիվ 121 հրամանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713